ծանեան զվարի բան լինելս[1]։ Եւ իբրև տեսի, զի ի միոյ յանկ(ե)անց գերեզմանի նորա հատուածս ինչ հատեալ էր, հարցի զքահանայ մի գերեզմանական, և ասեմ. ո՞ զայն արար. և նա ասէ. մանուկ ոմն մահմետական։ Բայց ես յայլոց լուայ. զի քահանայ ոմն յիւրայնոցն զայն արարեալ էր. և ի լուալիսն ի հոգալ զպէտս որովայնին, ի գարշելիսն անդ՝ չարաչար պատժեալ, մահազրաւ լեալ է։... աստ բարեկամք մեր լուեալ պատմեն մեզ, թէ ի հռօմայու խնդրեալ են ի ձէնջ, իբրև ի ճշմարիտ վկայից՝ զվարս տէր Կոմիտասին. և ուրախանան ընդ փառաւորութիւնս մեր, և ընդ այնպիսի վարկմունս նոցա ի վերայ մեր. զայսպիսեաց և մեզ հարցանեն իբրև զճշմարիտ գիտօղս...։

[Կ. Պոլիս] Նուաստ ծառայ

Հայր Դանիէլ վրդպտ. [Տէր Գրիգորեան]

ՅԹ.

Սառաֆեան արք.ի այս թուղթը՝ իր կեանքի վերջին օրերուն յայտագիրը կուտայ։ Ակնարկած նախորդ գիրը չունէր մեզ մասնաւոր կարևորութիւն մը։

Վերստին յայտարարութիւն գերյարգութեանդ՝ հանդերձ ողջունիւ
և. սիրով ի Քրիստոս Յիսուս

1772 Սեպտեմբերի Դ ի Կոստանդնուպօլիս

Անցեալ փոստիւն ծանուցաք Վեհանձնութեան քում, թէ ձեռամբ Էրարտօ Ռիէշ կոչեցեալ անձին, որ է ի Վիէնայ, և միջնորդութեամբ Փէթրօ Զաքարիային, որ է աստ՝ հասանելոց է առ քեզ մերթ հազար ղուշ. և մերթ աւելի կամ պակաս, որ է իմ դրամն. և ծանուցաք հրամանուցդ, թէ առեալ զայնս պահեսցես ի քեզ, մինչև ցհասանիլն իմ աստուծով ի յայդր կողմանս։ Եւ այժմ զնոյնն կրկնեմ քեզ, զի վասն Աստուծոյ՝ առանց ձանձրանալոյ կատարիցես զինդիրս մեր։ Վասն զի զուցէ ոչ կարիցեմ զայլ գիր ինչ գրել քեզ աստուստ, վասն նաւարկելոյս, որ ի մէջ սեպտեմբերի ամսոյս լինելոց է. և երևի թէ, դէպ ի Մարչիլիայ նաւելոց եմք, առ ի չգտանելոյ ուղղագնաց նաւ առ Վենէտդ. և այսու ամենայնիւ ողջ լիցիս ի Տէր՝ հանդերձ քոյայնովքդ, զորս ողջունեմ սիրով, բաւ է։

Փափազեան մահտեսի Ստեփան սիրազնոյն մերոյ՝ ողջոյն և օրհնութիւն ընծայեմ

Նուաստագոյն ծառայ Տեառն
Սարգիս Վրդպտ, և այլն

Կնիք

1. Կ'ուզէ անշուշտ ըսել. Ճանչցան՝ ինչ որ ես վարը պիտի ներկայացնեմ. այսինքն թէ՝ անդրադարձան կոխած կամ գտնուած տեղս՝ որ մէկէ մը անարգուեր է. ըստ մատց յաջորդող դէպքին։